

Биол. журн. Армении, 3-4 (59), 2007

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎԻՐԱԾ ԿՅՈՒՆ

Իրացավ Ռուսաստանի Բնական և Լեզվոգիական գիտությունների ակադեմիաների
ալլոիդիկոս կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրմեն Սիմոնյանի ծննդյան



75 և գիտական ու հասարակական գործունեության 50-ամյակը
Անցնելով Սոսկվայի Ս Լոմոնոսովի անվան պետական
համալսարանում ակադեմիկոսներ Ս. Սևերինի և Վ. Սկուլայնովի
կենսաքիմիական ու կենսաէներգետիկական և ակադեմիկոս
Յ. Բուսիարյանի ստեղծած հայկական կենսաքիմիական
դպրոցները նա հիստուն տարի աշխատում է ԳԳ ՂԱՍ Գ
Բուսիարյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում իր
ամբողջ կյանքը նվիրելով Հայաստանում էվոլյուցիոն
կենսաէներգետիկական գիտական ուղղության ստեղծմանը և
զարգացմանը, որի ձեռքբերումները նշանակալի են և
վկայակոչվում են ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան
մի շարք հեղինակների կողմից:

Այնպիսով ՄՊՅ երկրներում կենսաէներգետիկայի բնագավառի ճանաչված գիտնական
է: Նրա կողմից ղեկավարվող սաղմնաքիմիայի լաբորատորիան ՄՊՅ երկրներում գոյություն ունեցող
սակավաթիվ այն լաբորատորիաներից մեկն է: Որտեղ արդեն մի քանի տասնամյակ սխտեմատիկ
գիտական հետազոտություններ են կատարվում էվոլյուցիոն կենսաէներգետիկայի բնագավառում:

Պրոֆեսոր Ս Սիմոնյանի կողմից ազատ և ֆուսթորիացման հետ կապված օբյեկտացման
պրոցեսների փոխհարաբերությունների հայտնաբերումը ռեզեղում կենդանիների օնտոգենեզում
հանդիսանում է կենսաէներգետիկական բնական մեխանիզմներից մեկը, որի օգնությամբ
ձևավորվող բջիջներն ապահովվում են աներաժեշտ էներգիայով: Ստացված տվյալների հիման
վրա առաջին անգամ արվել է կենսաքիմիական նաբևոր եզրակացություն, որն ընդհանուր
կենսաբանական հետաքրքրություն է ներկայացնում: Հեկկել-Սյուլեբի բիոգենետիկ օրենքը, որն
արտայայտում է օնտոգենեզի և էնդոգենեզի էվոլյուցիոն կապը, ամրագրությամբ կիրառելի է նաև
բջիջներում ու ենթաբջջային կառուցվածքներում մոլեկուլային մակարդակով ընթացող
կենսաքիմիական և մասնավորապես, կենսաէներգետիկական ռեակցիաների համար: Նման
եզրակացությունը նորոգի է մեկնաբանում և ընդլայնում պատկերացումները օնտոգենեզի և
էնդոգենեզի էվոլյուցիոն կապի վերաբերյալ և կարևոր կենսաբանական հայտնաբերություն է:

Կարևոր նշանակություն ունեցող տվյալներ են ստացվել գրտալին ստրեսի
ներգործությամբ թոչնի զարգացող սաղմի բջիջներում կենսաէներգետիկական պրոցեսներում
կատարվող փոփոխությունների վերաբերյալ: Ցույց է տրվել, որ չափավոր գրտալին ստրեսը
վզայիտրեն խթանում է այն ֆերմենտների ակտիվությունը, որոնք անմիջականորեն մասնակցում
են լներգուստացման ու լներգիայի յուրացման պրոցեսներին: Ստացված այդ արդյունքները
հիմնարար ինչպես նաև կարևոր կիտառանան նշանակություն ունեն: Տեսական այդ տվյալների
հիման վրա մշակվել է գոյության տեսական թռչունների ճատահանության գիտականորեն

հիմնավորված նոր տեխնոլոգիա, որի կիրառումը ճուշտի ելքը բարձրացնում է մինչև 8-12 %-ով և զգալիորեն նպաստում սերնդի աճին: Գիտությունների Ազգայնաբանական կենտրոնի ներկայացմամբ և ՀՀ կառավարության որոշմամբ այդ մեթոդը փորձարկվել է և կիրառվել համառազմաբարձրության բոլորողական տնտեսություններում և տնտեսական զգալի արդյունք տվել:

Ընդլայնվել և խորացվել են Ա.Սիմոնյանի կողմից ղեկավարվող լաբորատորիայի արտասահմանյան գիտական կապերը: Հվեդիայի Գյոթեբուրգի համալսարանի Նյարդակենսաբանության ինստիտուտի պրոֆեսորներ Ա. Համբերգերի և Ք. Հազիդիի հետ համատեղ նրա կատարած հետազոտություններն առաջին անգամ բացահայտել են նյարդապնեղիկի սպիտակուցների դերը նյարդային հյուսվածքի Լենգդոնի փոխանակության մեջ, որանով իսկ հիմնավորելով հիշողության ֆունկցիայում Լենգդոնի կոստի անհրաժեշտության վերաբերյալ Ա. Սիմոնյանի կողմից առաջ քաշված վարկածը:

Պրոֆեսոր Ա. Սիմոնյանը արդեն չորս տասնամյակից ավելի սերտ գիտական կապեր ունի նաև Մոսկվայի Ս. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ա. Բելոգերսկու անվան ֆիզիկա-քիմիական կենսաբանության ինստիտուտի կենսալենգդոնիկայի բաժնի հետ, որը ղեկավարում է ակադեմիկոս Վ. Սկուլաչյովը: Համատեղ ուսումնասիրվում է թթվածին ներթափանցող փոխանակության ինքնաբերական դերը որպես բջջի շնչառության նոր համակարգի, ինչպես նաև բջջիցների ապոպտոզի պրոբլեմը, որը անմիջականորեն առնչվում է կյանքի հնարավոր երկարացման հետ:

Ա Սիմոնյանը բազմաթիվ գիտական աշխատանքների, մեծագործությունների և դասագրքերի հեղինակ է: Արգասաբեր է նաև նրա աշխատանքը մասնագիտական բառարանագրության և հայերեն ժամանակակից կենսաբանական միասնական տերմինաբանություն ստեղծելու գործում: Նա գրել է ռուս-հայերեն կենսաքիմիական, ինչպես նաև ռուս-անգլերեն-հայերեն կենսաբանական բացատրական ստիպարաբանական բառարաններ, որոնց բառացանկի մեջ մտել են կենսաքիմիայի ու կենսաբանության տարրեր բաժինների վերաբերող հազարավոր տերմիններ, թերված են դրանց ժամանակակից բացատրությունները, որոնց հանրագիտարանային բնույթ ունեն. մշակվել է հայերեն միասնական կենսաբանական տերմինաբանություն:

Ա. Սիմոնյանը կարևոր ներդրում ունի նաև գիտական կադրերի պատրաստման և մանկավարժության բնագավառում: Գավառի ոլորտական համալսարանի ստեղծման օրից մինչև այսօր աշխատում է նաև այդ համալսարանում: Նա հիմնադրել է կենսաբանության և էկոլոգիայի ամբիոնը, հանդիսանում է դրա անփոփոխ վարիչը, կարևոր աշխատանք է կատարում կենսաբան և էկոլոգ մասնագետների պատրաստման գործում միասնական ամրապնդելով այդ բուհի և Կենսաքիմիայի ինստիտուտի միջև, գիտությունների միասնական աշխատանքային համագործակցությունը: Իր ծննդավայրում՝ Գավառում բուհական համակարգում ունեցած մեծ աշխույժ, գիտական, հասարակական ակտիվ գործունեության համար քաղաքի ավագանու որոշմամբ նրան շնորհվել է «Գավառի պատվավոր քաղաքացի» կոչում:

Պրոֆեսոր Ա. Սիմոնյանը այսօր էլ իրեն բնորոշ աշխատասիրությանը ու բարեխղճությանը շարունակում է գիտական աշխատանքը էվոլյուցիոն կենսալենգդոնիկայի բնագավառում: Ընդհանրապես նրան իր հոբբիյանի առթիվ ցանկանում ենք առողջություն և նոր հաջողություններ գիտության բնագավառում:

Ազգայնաբանական Կ. Դարապետյան

պրոֆեսոր Գ. Գևորգյան

ՀՀ ԳԱԱ Հ Բուհական կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն